

Մեթոդաբանական տեսակետէն, բարոյագիտութեան հիմնաւորումը կա-
ռելի է չորս եղանակներու բաժնելով:-

1. Վերլուծական եղանակ

Բարոյագիտութեան հիմնաւորման *վերլուծական*⁽⁴⁹⁾ (Analytic) եղանակը կը քննարկէ բարոյական արտայայտութիւններուն կամ ասոյթներուն ընդ-
հանրապէս լեզուական հեշտ ըմբռնելիութիւնը, անոնց տրամաբանական
տոկոսութիւնը եւ հակասութիւններէ զուրկ ըլլալը: Այս իմաստով, ան կը մնայ
մետա-բարոյագիտութեան (Meta-Ethics) սահմաններուն մէջ:

2. Մեկնագիտական եղանակ

Բարոյագիտութեան հիմնաւորման *մեկնագիտական*⁽⁵⁰⁾ (Hermeneutics) ե-
ղանակը կը քննարկէ բարոյական արտայայտութիւններուն կամ ասոյթներուն
ընդհանրապէս իմաստի յարմարագոյն ըմբռնելիութիւնը, բարոյական միջա-
վայրի մը մէջ: Մեկնագիտական եղանակը, իր մէջ պէտք է միացնէ անհատ-
ներու բարոյական դիրքորոշումներու բազմազանութիւնը, կազմելու համար
ընկերային շրջանակի մը բարոյական գիտակցութիւնը: Այստեղ անհատներու
կամ խմբաւորումներու բարոյական ծայրայեղ դիրքորոշումները կրնան
լարուածութիւն մը յառաջացնել ընկերային շրջանակին մէջ: Այս հարցը
լուծելու համար, մեկնագիտական եղանակը կարիքը ունի *քննախօսական*
եղանակի օժանդակութեան:

3. Անդրանցական եղանակ

Բարոյագիտութեան հիմնաւորման վերանցական կամ անդրանցական
(Transcendental) եղանակը (հետեւելով Իմմանուէլ Կանտի) կը քննարկէ ան-
հատներու բարոյական փորձառութիւնը, գործնական սկզբունքի մը լոյսին
տակ: Արդարեւ, բոլորին համար պէտք է գոյանայ ձեւական սկզբունք մը, որու
հիմքը կը կազմէ բարոյական կամեցողութիւնը, դատողութիւնն ու վարմունքը:
Այս իմաստով, բարոյական գերագոյն սկզբունք մը, որ բանականութեան
գործնական ինքնավարութիւնը կը հաստատէ, այսինքն՝ մարդոց բարոյական
ինքնօրինութեան եւ ինքնավարութեան ազատութիւնը: Նախորդին նման, նա-
եւ այս եղանակը անհատներու կամ խմբաւորումներու բարոյական ծայրայեղ
դիրքորոշումներու պատճառով լարուածութիւն մը կը յառաջացնէ ընկերային
շրջանակին մէջ: Այս հարցը լուծելու համար, վերանցական եղանակը եւս
կարիքը ունի *քննախօսական եղանակի* օժանդակութեան:

(49) **Վերլուծական փիլիսոփայութիւն** (Analytic Philosophy) ուղղութեան մասին,
տե՛ս Մաս – 2, էջ 115:

(50) **Մեկնագիտութիւն** (Hermeneutics) փիլիսոփայական ուղղութեան մասին, տե՛ս
Մաս – 2, էջ 114: